ՀԱՐԳԵԼԻ ԱՍՊԻՐԱՆՏՆԵՐ ԵՎ ՀԱՅՑՈՐԴՆԵՐ,

2025թ. ***հոկտեմբերի 6-ից*** կմեկնարկեն աշնանային կիսամյակի դասընթացները, որոնց մասնակցելու համար անհրաժեշտ է նախապես ***գրանցվել***:

Գրանցվելուց առաջ խնդրում ենք հանգամանալից ծանոթանալ ներքոնշյալ պահանջներին կամ ցուցումներին և խստագույնս հետևել դրանց:

- Դասընթացներին մասնակցելու համար պետք է գրանցվել մինչև սույն թվականի ***սեպտեմբերի 30-ը ներառյալ***: Նշված ժամկետում չգրանցվելու դեպքում կզրկվեք տվյալ կիսամյակի դասընթացին/ներին մասնակցելու հնարավորությունից:

- ***Գրանցվելուց առաջ*** **մանրամասն ծանոթացեք դասընթացների ժամանակացույցին** (*տե՛ս «Դասընթացների ժամանակացույց» փաստաթուղթը*) և ***այդուհետ կատարեք ընտրությունը***:

- *Հումանիտար կամ բնագիտական մասնագիտություններ ունեցող ասպիրանտներն ու հայցորդներն* ***անգլերեն լեզվի խմբերն ընտրելիս պետք է հաշվի առնեն հետևյալը՝***

  ա/ խումբ 1-ը նախատեսված է անգլերենի իմացության B1 և ավելի բարձր մակարդակ ունեցողների համար:
  բ/ խումբ 2-ը նախատեսված է անգլերենի իմացության B1–ից ցածր մակարդակ ունեցողների համար:

Խնդրում ենք անգլերենի խմբերում գրանցվելուց անպայման հաշվի առնել վերոգրյալը՝ այդ կերպ նպաստելով դասերի արդյունավետության բարձրացմանը:

Անգլերենի իմացության ձեր մակարդակը ստուգելու համար կարող եք անցնել https://www.europa-school.co.uk/language-level-test/ հղմամբ և լրացնել համապատասխան թեստը: Անգլերենի իմացության Ձեր մակարդակը պարզելուց հետո միայն գրանցվեք ԽՈՒՄԲ 1-ում կամ ԽՈՒՄԲ 2-ում:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

- ԳՐԱՆՑՎԵԼԻՍ ՆՇԵՔ ԵՊՀ ԴՈԿՏՈՐԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿՈՂՄԻՑ ՁԵԶ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՆ: ՆՐԱՆՑ, ՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ ԴԵՌ ՉԻ ՏՐԱՄԱԴՐՎԵԼ, ԿԱՐՈՂ ԵՆ ԳՐԱՆՑՎԵԼ ԱՅԼ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵՈՎ:

- ԳՐԱՆՑՎԵՔ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԱՍԸՆԹԱՑԻՆ/ՆԵՐԻՆ, որոնց վստահաբար մասնակցելու եք: *ՊԱՐՏԱԴԻՐ ՉԷ ԸՆՏՐԵԼ ԲՈԼՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԸ:*

- *ՄԻ՛ ԳՐԱՆՑՎԵՔ այն դասընթացներին*, որոնց *ՆԱԽԿԻՆՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՔ ԵՎ ՍՏԱՑԵԼ ՍՏՈՒԳԱՐՔԸ*: *ՆՄԱՆ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՀԱՎԵԼՅԱԼ ԿՐԵԴԻՏ ՉԵՔ ԿՈՒՏԱԿԵԼՈՒ:*

- *Հումանիտար մասնագիտություններ ներկայացնող ասպիրանտներն ու հայցորդներն անգլերեն լեզվի դասընթացն ընտրելիս և գրանցվելիս ՉՊԵՏՔ Է ընտրեն բնագիտական մասնագիտություններով ասպիրանտներին կամ հայցորդներին դասավանդող դասախոսի/ների և հակառակը*:

- *Գրանցումն իրականացվելու է առցանց եղանակով: Յուրաքանչյուր դասընթացին գրանցվելու համար պետք է անցնել հենց այդ դասընթացի համար ստեղծված հղմամբ և լրացնել անհրաժեշտ տվյալները:*

Առցանց դասընթացներն անցկացվելու են www.e-learning.ysu.am հարթակում:

Տեղեկացնում ենք, որ Ձեր *ՈՂՋ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՊԵՏՔ Է ԿՈՒՏԱԿԵՔ ԱՌՆՎԱԶՆ 32 ԿՐԵԴԻՏ, ՈՐԻՑ 12-Ը ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՑ, իսկ 20-Ը՝ ԸՆՏՐՈՎԻ: Պարտադիր դասընթացները երեքն են՝*

1. *«Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն» - 4 կրեդիտ*
2. *«Անգլերեն լեզու» - 4 կրեդիտ*
3. *«Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ» - 4 կրեդիտ*

ՀԻՇԵՑՆԵՆՔ նաև, որ *պարտադիր համարվում են այն դասընթացները, որոնց դուք չեք կարող չմասնակցել Ձեր ուսումնառության ընթացքում*: Այդ դասընթացները նախընտրելի է

ընտրել ուսումնառության առաջին տարվա ընթացքում: Ինչ վերաբերում է մյուս դասընթացներին, ապա դրանք ընտրովի են և ունեն տարբեր կրեդիտատարություն:

ՍՏՈՐԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԱՅՍ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՎ ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻՆ ԳՐԱՆՑՎԵԼՈՒ ՀՂՈՒՄՆԵՐԸ

ՊԱՐՏԱԴԻՐ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ - Ա. Ավագյան https://forms.gle/Ah4eqycGD2o6c7Cz5

2. Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն – Հ. Վերմիշյան https://forms.gle/RiNYQECEZGMssqnq7

3. Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) - Խումբ 1՝ B1+ մակարդակ – Մ. Ապրեսյան https://forms.gle/vvos8fr1ae9Cru2Q8

4. Անգլերեն լեզու (հումանիտար մասնագիտությունների համար) - Խումբ 2՝ մինչև B1 մակարդակ – Մ. Ապրեսյան https://forms.gle/UFTuF7oHnfjgB4Rx9

5. Անգլերեն լեզու (բնագիտական մասնագիտությունների համար) – Խումբ 1՝ B1+ մակարդակ - Ե. Երզնկյան https://forms.gle/j13ZKKC5gNaPHpnf7

6. Անգլերեն լեզու (բնագիտական մասնագիտությունների համար) – Խումբ 2՝ մինչև B1+ մակարդակ - Զ. Վարդապետյան https://forms.gle/b7hw3pKhBBDkJak56

ԸՆՏՐՈՎԻ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

1. Գիտության փիլիսոփայություն /6 կրեդիտ/ – Դ. Մոսինյան, Կ. Յարալյան https://forms.gle/vCABnjvps5Regj7H9

2. Մասնագիտական հաղորդակցման հոգեբանություն /3 կրեդիտ/ - Հ. Ավանեսյան https://forms.gle/kGN2jmpfSchLEJZ69

3. Մարդկային և նյութական ռեսուրսների կառավարում /3 կրեդիտ/ - Ա. Մաքսուդյան https://forms.gle/jQd99GQ518JM54f48

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք այցելել ԵՊՀ պաշտոնական կայք (www.ysu.am) կամ դիմել ԵՊՀ դոկտորական կրթության կենտրոն (Ա. Մանուկյան 1, հեռ.՝ (060) 710 – 188, (010) 555 - 531):